ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՄԱՆ

«13» «օգոստոս» 2021թ. № 315-Ա

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԶՎԱՐԹՆՈՑ» ԱՎԻԱՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾԱՐԱՐ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 84-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 2-րդ մասով, վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետով և Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի 2007 թվականի հունիսի 4-ի №141-Ա հրամանով հաստատված «Զվարթնոց» ավիաօդերևութաբանական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 8-րդ գլխի 8.2 կետի 5-րդ ենթակետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել շրջակա միջավայրի նախարարության «Զվարթնոց» ավիաօդերևութաբանական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության 2021 թվականի գործարար ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

ՆԱԽԱՐԱՐ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

8/13/2021

X

ՌՈՄԱՆՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Signed by: PETROSYAN ROMANOS 3608790012

«13» օգոստոս 2021թ.
ք.Երևան

Հավելված
Շրջակա միջավայրի նախարարի
«13» օգոստոսի 2021թ. N315-Ա հրամանի

«ԶՎԱՐԹՆՈՑ» ավիաօդերևութաբանական կենտրոն ՓԲԸ

2021 թվականի
ԳՈՐԾԱՐԱՐ ԾՐԱԳԻՐ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1961 թվականից գործող «Զվարթնոց» ավիաօդերևութաբանական կենտրոնը 1995 թվականին վերակազմավորվեց որպես հարյուր տոկոս պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերություն:

ՀՀ կառավարության 1997 թվականի մայիսի 29-ի N153 որոշման համաձայն ՀՀ բնապահպանության նախարարությունը համարվել է Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպությունում (ICAO) Հայաստանի Հանրապետության լիազոր օդերևութաբանական մարմին, իսկ ՀՀ բնապահպանության նախարարության 2007 թվականի հունիսի 4-ի N142-Ա հրամանով «Զվարթնոց» ավիաօդերևութաբանական կենտրոն փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) նշանակվել է Երևանի «Զվարթնոց» և Գյումրու «Շիրակ» միջազգային օդանավակայաններում օդերևութաբանական ապահովման մարմին և ՀՀ տարածքում օդային երթևեկության սպասարկման օդերևութաբանական հսկում իրականացնող մարմին: Իսկ ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության կողմից (այսուհետ՝ տեխնիկական կարգավորման լիազորված մարմին) 2014 թվականի հունիսի 16-ին տրվել է աերոնավիգացիայի օդերևութաբանական ապահովում իրականացնելու թույլտվություն (սերտիֆիկատ):

Ընկերությունը 100% պետական բաժնեմաս ունեցող ընկերություն է, որի բաժնետոմսերի կառավարման լիազորությունը ՀՀ կառավարության 2007 թվականի ապրիլի 19-ի N466-Ա որոշմամբ վերապահվել է ՀՀ բնապահպանության նախարարությանը (այսուհետ՝ օդերևութաբանական լիազոր մարմին):

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ ք. Երևան, օդանավակայան, «Զվարթնոց»-2:

Ընկերությունն իր գործառույթներն իրականացնում է Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ICAO) և Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպության (WMO) կողմից սահմանված ստանդարտների ու ընթացակարգերի, Եվրոպական Հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 17-ի «Աերոնավիգացիոն սպասարկման ապահովման ոլորտում ընդհանուր պահանջների սահմանման մասին» թիվ 1035/2011 կանոնակարգի, «Օդային երթևեկության կազմակերպման, աերոնավիագացիոն կապի և դիտարկման, աերոնավիգացիայի օդերևութաբանական ապահովման, աերոնավիգացիոն տեղեկատվության ծառայություն իրականացնող կազմակերպություններին թույլտվություն տալու կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հունիսի 19-ի թիվ 744-Ն որոշմամբ՝ ինչպես նաև հիմք ընդունելով «Արմենիա միջազգային օդանավակայաններ» փակ բաժնետիրական ընկերության կողմից ներկայացված «Զվարթնոց» օդանավակայանի զարգացման 2018-2022թթ. Մաստեր պլանը, Օդային նավագնացության անվտանգության ապահովման եվրոպական կազմակերպության 2013 թվականի. նոյեմբերի թիվ 13.60.01 փաստաթղթի «ՄԱՅՐՈՒՂԱՅԻՆ ԳԱՆՁՈՒՄՆԵՐԻ ԾԱԽՍԱՀԻՄՔԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԵՎ ՄԻԱՎՈՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ»-ը, առաջնորդվելով ՀՀ բնապահպանության նախարարի 2007 թվականի հունիսի 4-ի թիվ 141-Ա հրամանով հաստատված կանոնադրությամբ, «Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին» կոնվենցիայի (այսուհետ՝ Չիկագոյի կոնվենցիա), «Ավիացիայի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով և այլ իրավական ակտերով:

1.2 Ընկերության կառուցվածքը՝ գծապատկերով

«Զվարթնոց» ավիաօդերևութաբանական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության կառուցվածք



ԳԼՈՒԽ 2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՐԱՐ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԸ

Մինչ օրս Ընկերության զարգացման հիմնական գործընթացները ձևավորվել են 2017-2021թթ. հնգամյա զարգացման գործարար ծրագրի հիմքով: Ընկերության 2021 թվականի «Գործարար ծրագրի» (այսուհետ՝ «Գործարար ծրագիր») նպատակն է սահմանել և հաստատել 2021 թվականի ընթացքում իրականացվելիք միջոցառումների ծրագիրը և կատարելագործել Հայաստանի Հանրապետության օդային տարածքում և միջազգային օդանավակայաններում իրականացվող թռիչքների օդերևութաբանական սպասարկումը: Սույն միջոցառումները նպատակաուղղված են Ընկերության ընթացիկ գործունեության ապահովմանը, կիրառվող գործառույթների կանոնակարգմանը, միջազգային կազմակերպությունների ընդունած մոտեցումների, ստանդարտների ու գործառույթների կիրառմանը, անհրաժեշտ միջազգային համագործակցության ապահովմանը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օդային տարածքում քաղաքացիական ավիացիայի օդերևութաբանական սպասարկմանն անհրաժեշտ իրազեկ ու գործունյա անձնակազմի կազմավորմանը:

2021 թվականին նախատեսվում են մի շարք միջոցառումներ, որոնք հանդիսանում են 2019-2020թթ. իրականացված կամ ընթացք ստացած գործընթացների տրամաբանական շարունակությունը առկա և ակնկալվող արտադրատնտեսական ակտիվների հնարավորությունների շրջանակներում՝ կարևորելով Ընկերության ստորաբաժանումների գործունեության օպտիմալացումն ու առավել կանոնակարգված տեսլականը:

Սույն ծրագրում ընդգրկված բոլոր միջոցառումների նախագծերն անցել են մի շարք քննարկումների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաստատման փուլերը: Դրանց իրականացման ընթացքում, ըստ ընդունված կարգի, պահպանվելու են Ընկերության հիմնադրի կամ նրա ներկայացուցչի նախնական տեղեկացման և նրանց հետ համաձայնեցման գործընթացները:

«Գործարար ծրագիրը» նախատեսում է.

- 2021 թվականի թռիչք-վայրէջքի ծավալի և պահանջարկի կանխատեսումը,
- 2021 թվականի ֆինանսական արդյունքների կանխատեսումը,
- 2021 թվականի զարգացման միջոցառումները՝ ըստ գործունեության հիմնական բնագավառների, այդ թվում՝
  ա) աերոնավիգացիայի օդերևութաբանական ապահովում,
  բ) տեխնիկական ապահովում,
  գ) մարդկային ռեսուրսների կառավարում,
  դ) ֆինանսատնտեսական գործունեություն,
  ե)միջազգային համագործակցություն և այլն:

Գործարար ծրագիրը մշակվել է Ընկերության թռիչքների անվտանգության և որակի կառավարման բաժնի կողմից (060 37 33 60):

ԳԼՈՒԽ 3. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Ընկերության առաքելությունը Հայաստանի Հանրապետության օդային տարածքում և միջազգային օդանավակայաններում թռիչքային առումով անվտանգ և ծախսային

առումով արդյունավետ քաղաքացիական ավիացիայի օդերևութաբանական սպասարկումն է: Այդ նպատակներին հասնելու համար պետք է աստիճանաբար զարգացնել և բարելավվել կառավարման մեթոդները, մարդկային ռեսուրսները, կիրառվող աշխատանքային ընթացակարգերը և ենթակառույցները՝ համագործակցելով ԻԿԱՕ-ի, Եվրոկոնտրոլի, ՀՕԿ-ի, շրջակա միջավայրի նախարարության, քաղաքացիական ավիացիայի կոմիտեի և մեր գործընկերների հետ, այդ թվում՝ օդային տարածքից օգտվողների և բնագավառը ներկայացնող այլ ընկերությունների հետ:

Ընկերության գործունեության հիմնական տեսակներն են՝

1) ինքնաթիռների թռիչքների օդերևութաբանական սպասարկման իրականացում.
2) աէրոսինոպտիկական նյութերի մշակում և վերլուծում.
3) ամրակցված տարածքի եղանակի կանխատեսում.
4)ավիացիայի համար եղանակային վտանգավոր երևույթների առաջացման վերաբերյալ շտորմային նախազգուշացումների կազմում և դրանց ճշգրտումներ.
5) թռչող անձնակազմերին օդերևութաբանական համապատասխան փաստաթղթերով ապահովում.
6) օդանավակայանում փաստացի եղանակի դիտարկումների կատարում.
7) ավիացիոն օդերևութաբանական հետազոտությունների իրականացում և եղանակի կանխատեսման նոր մեթոդների կիրառում:

ԳԼՈՒԽ 4. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետությունը, հանդիսանալով Միջազգային քաղաքացիական ավիացիայի կազմակերպությանն անդամակցող երկիր, պարտավորություն է ստանձնել քաղաքացիական ավիացիայի թռիչքներն անվտանգ դարձնելու նպատակով Հայաստանի Հանրապետության բոլոր միջազգային օդանավակայաններն ապահովել համապատասխան օդերևութաբանական մարմիններով: Ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում միակ մասնագիտացված կազմակերպությունն է, որն իրականացնում է քաղաքացիական ավիացիայի օդերևութաբանական սպասարկում ՀՀ օդային տարածքում և միջազգային օդանավակայաններում:

Ընկերության գործունեության նպատակը Հայաստանի Հանրապետության օդային տարածքում, ինչպես նաև միջազգային օդանավակայաններում աերոնավիգացիայի օդերևութաբանական սպասարկման ապահովումն է:

Ընկերության խնդիրն է քաղաքացիական ավիացիայի օդերևութաբանական սպասարկման բնագավառում կիրառվող ընթացակարգերի կատարելագործումը, նոր ընթացակարգերի մշակումը, աերոնավիգացիայի՝ օդերևութաբանական սպասարկմանն անհրաժեշտ մարդկային ռեսուրսների զարգացումը, տեխնիկական սարքավորումների հետագա արդիականացման ապահովումը համաձայն Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների և Հայաստանի Հանրապետությունում գործող իրավական ակտերի պահանջների:

Ընկերության գործունեության ընդլայնումը հնարավորություն կտա օդերևութաբանական ծառայություններ մատուցել ոչ միայն քաղաքացիական ավիացիային, այլ գյուղացիական խոշոր տնտեսություններին, տուրիզմի, էկոտուրզմի ոլորտում գործող ընկերություններին, խոշոր ֆերմերային տնտեսություններին և ՀՀ հատուկ պահպանվող տարածքներին:

Այսօր աշխարհի շատ զարգացած երկրներում ստեղծվել են ռադիոլոկացիոն ցանցեր: Հայաստանը նույնպես ունի ռադիոլոկացիոն ցանց ստեղծելու հնարավորություն, ինչը թույլ կտա ՀՀ ամբողջ տարածքում իրականացնել եղանակային պայմանների վերաբերյալ օպերատիվ տեղեկատվության փոխանակում, որը շատ կարևոր նշանակություն ունի գյուղատնտեսության բնագավառում կարկտային օջախների և այլ վտանգավոր եղանակային երևույթների ժամանակին հայտնաբերման համար:

Որպես կայացած համակարգ՝ այն ունի լայն հնարավորություններ զարգանալու ինչպես երկրի ներսում, այնպես էլ անդրսահմանային ու ռեգիոնալ տարածաշրջաններում:

Հայտնի է, որ կլիմայի փոփոխությամբ պայմանավորված, հարմարվողականության ծրագրերը ներկայումս ունեն միջազգային դոնոր կազմակերպությունների աջակցությունը հատկապես դրամաշնորհների տեսքով:

Ընկերության զարգացման հեռանկարային հիմնական ուղղությունները նախանշելու, մատուցվող օդերևութաբանական ծառայությունների որակի շարունակական զարգացումն ապահովելու նպատակով սահմանվել են ռազմավարական հետևյալ նպատակները.

1) կատարելագործել որակի և թռիչքների անվտանգության կառավարման համակարգերը և ձգտել ավելի բարձր մակարդակի.
2) համապատասխանել միջազգային քաղաքացիական ավիացիայի ոլորտի օրենսդրության պահանջներին.
3) կատարելագործել Ընկերության ֆինանսական կառավարումը,
4) արդիականացնել տեխնիկական և տեղեկատվական միջոցները: Ներդնել ժամանակակից համակարգեր աերոնավիգացիայի օդերևութաբանական սպասարկման ոլորտում.
5) լիարժեք կառավարել և զարգացնել մարդկային ռեսուրսները:

ԳԼՈՒԽ5. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ընկերության գործունեության հիմնական ուղղություններն են՝

1) Հայաստանի Հանրապետության տարածքում օդանավ շահագործող կազմակերպություններին և օդային երթևեկության կազմակերպման մարմիններին ավիաօդերևութաբանական տեղեկատվության տրամադրում,
2) Հայաստանի Հանրապետության միջազգային օդանավակայաններից իրականացվող չվերթների ավիաօդերևութաբանական տեղեկատվության տրամադրում (փաստացի և կանխատեսվող),
3) Հայաստանի Հանրապետության միջազգային օդանավակայանների համար կանխատեսումների ապահովում,
4) Հայաստանի Հանրապետության օդային տարածքում վտանգավոր երևույթների վերաբերյալ (SIGMET) տեղեկատվության ապահովում,
5) Հայաստանի Հանրապետության միջազգային օդանավակայաններում վտանգավոր եղանակային երևույթների վերաբերյալ նախազգուշացումների ապահովում,
6) Աէրոսինոպտիկական նյութերի մշակում և վերլուծում:

Թվարկված գործառույթներն Ընկերությունն իրականացնում է շուրջօրյա ռեժիմով:
1) օդանավակայանի փաստացի և Երևան FIR-ում կանխատեսվող եղանակի մասին հաղորդագրություն (ամեն կես ժամը մեկ),
2) Երևան FIR-ում կանխատեսվող եղանակի մասին հաղորդագրություն TAF ֆորմատով (վեց ժամը մեկ),
3) ավիացիայի համար վտանգավոր երևույթների մասին փաստացի և կանխատեսվող SIGMET ձևաչափով հաղորդագրությունները սպասարկվող տարածաշրջանի համար:

Վերը նշված ծառայություններն իրականացվում են վճարովի հիմունքներով:

ԳԼՈՒԽ 6. ՆԱԽՈՐԴ ՊԼԱՆԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ ԵՎ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

6.1 Տեխնիկական ապահովման հիմնական ուղղություններն են.

1) **Գյումրու «Շիրակ» օդանավակայանում շահագործվող տեսանելիության հեռավորության չափման, ընթացիկ եղանակի, մթնոլորտային ճնշման, ջերմաստիճանի, խոնավության, գետնամերձ քամու ուղղության և արագության, ամպերի ստորին սահմանի բարձրությունը չափող տվիչները նորով փոխարինելը,**
2) **Գյումրու «Շիրակ» ՕՍ բաժնում էլեկտրաէներգիայի խափանումների հետևանքով օդերևութաբանական տեղեկատվության տրամադրման վրա ազդեցությունները չեզոքացնելու նպատակով 4.5-5 կվ/ժ հզորությամբ անխափան սնուցման աղբյուրներ տեղադրելը,**
3) **«Զվարթնոց» օդանավակայանի թռիչքադաշտում շուրջ 1500մետր օպտիկամանրաթելային կապուղու տեղադրումը,**
4) **«Զվարթնոց» օդանավակայանի թռիչքադաշտում շահագործվող օդերևութաբանական տվիչների հիմնական էլեկտրամատակարարման մալուխների փոխարինումը (շուրջ 2500մետր).**
5) **Կապանի «Սյունիք» օդանավակայանում օդերևութաբանական սպասարկում իրականացնելու համար անհրաժեշտ օդերևութաբանական տվիչների և ծրագրային ապահովման միջոցների ձեռքբերումը,**
6) **Օդերևութաբանական ռադիոլոկատորի առանձին (ըստ կարևորության) հանգույցների էլեմենտային բազայի փոխարինումը՝ կիսահաղորդչային համակարգով:**

Ստորև թվարկված նախորդ պլանային ժամանակահատվածի համար նախատեսված աշխատանքները, բացառությամբ 3-րդ և 4-րդ կետերի, ամբողջությամբ իրականացվել են: Համաճարակի և պատերազմի հետևանքով «Զվարթնոց» միջազգային օդանավակայանից կատարվող թռիչք-վայրէջքների նվազումը բացասական ազդեցություն է ունեցել (**2019 թվականի համեմատ շուրջ 61.7%-ով նվազել է թռիչքների քանակը**) 2020 թվականի համար նախապես պլանավորված կապիտալ ծախսերի իրականացման վրա, որոնց մի մասը տեղափոխվել է 2021 թվական:

6.2Ընկերությունը 2021 թվականին նախատեսում է իրականացնել.

1) «Զվարթնոց» օդանավակայանի թռիչքադաշտում շուրջ 3300 մետր օպտիկամանրաթելային կապուղու անցկացում հետևյալ երթուղով՝ դիտարկումների բաժին-կանխատեսումների բաժին-«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ,
2) «Զվարթնոց» և «Շիրակ» օդանավակայանների փաստացի եղանակի ստացման համակարգի ծրագրային ապահովման միջոցների մասնակի նորացում և կարողությունների մեծացում,
3) Կապանի «Սյունիք» օդանավակայանում օդերևութաբանական սպասարկում իրականացնելու համար անհրաժեշտ օդերևութաբանական տվիչների և ծրագրային ապահովման միջոցների ձեռքբերում և տեղադրում,
4) «Զվարթնոց» օդանավակայանի թռիչքադաշտում շահագործելու նպատակով ամպրոպ տեղորոշիչ տվիչի ձեռբերում,
5) «Զվարթնոց» օդանավակայանի թռիշքադաշտում գտնվող դիտարկումների շենքի ջրահեռացման համակարգի նորոգում,
6) 2019-2020թթ. արտաքին ֆինանսական աուդիտ,
7) Գյումրու «Շիրակ» օդանավակայանի նոր դիտարկումների շենքի կառուցման համար նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և ծախսերի գնահատման մրցույթի անցկացում,
8) Ընկերության մասնագիտական անձնակազմի աշխատավարձերի բարձրացում շուրջ 10%-ի չափով:

ԳԼՈՒԽ 7. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Սույն գործարար ծրագրի շրջանակներում Ընկերության ուժեղ և թույլ կողմերի, վտանգների և հնարավորությունների գնահատման արդյունքում, առաջիկա տարում կանխատեսվում են հետևյալ հնարավոր ռիսկերը.
1) նոր համակարգերի ներդրման, ինչպես նաև զարգացման ծրագրերի տապալումը,
2)տնտեսական /ֆինանսական/ անկայունությունները՝ պայմանավորված մի շարք հնարավոր պատճառներով՝ ծրագրվող թռիչքների քանակի փոփոխություններ, մատուցվող ծառայությունների գնագոյացման փոփոխություններ /էժանացում/ և այլն
3) մարդկային ռեսուրսների զարգացման ծրագրերի տապալումը,
4) նոր միջազգային պահանջները և դրանք բարելավվելու նպատակով օդերևութաբանների և տեխնիկական անձնակազմերի կատարելագործման փորձառության բարձրացման կազմակերպչական և ֆինանսական դժվարությունները,
5)տեխնիկական համակարգերի արդիականացման և օպտիմալ մոտեցման դժվարությունները,

Ընկերության կողմից ռիսկերի և վտանգների ազդեցության մեղմացման և տեսլականին հասնելու համար մշակվել են հետևյալ ռազմավարական խնդիրները՝

1) Կատարելագործել որակի և անվտանգության կառավարման համակարգը և ձգտել եվրոպական մակարդակի,
2) Համապատասխանել միջազգային քաղաքացիական ավիացիայի ոլորտի օրենսդրության պահանջներին,
3) Կատարելագործել Ընկերության ֆինանսական կառավարումը՝ հնարավորինս ներառելով նաև տեղեկատվական տեխնոլոգիաների և ծրագրային ապահովումների օգտագործումը,

4) Տեխնիկական և տեղեկատվական միջոցների արդիականացում: Ներդնել ժամանակակից համակարգեր աերոնավիգացիայի օդերևութաբանական սպասարկման ոլորտում,
5) մարդկային ռեսուրսների լիարժեք կառավարում և զարգացում:

Ազգային յուրահատուկ պահանջները հաշվի առնելու հետ մեկտեղ այս ռազմավարական խնդիրները համապատասխանում են ԻԿԱՕ-ի և Եվրոկոնտրոլի պահանջներին:

ԳԼՈՒԽ 8. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Ընկերությունը ծրագրում է շարունակել իր գործունեության համապատասխանեցումը միջազգային նորմերին, ԻԿԱՕ-ի, Եվրոկոնտրոլի և ՀՕԿ-ի պահանջներին, գործող և նոր ընդունվող կանոնակարգերին ու հրահանգներին, ապահովել նշված ծրագրերով և կանոնակարգերով նախատեսվող գործունեության և որակի արդյունավետության բարձր մակարդակը:

Հայաստանի Հանրապետության օդային տարածքի սահմանափակ չափերի, ինչպես նաև միջազգային օդանավակայանների սակավ քանակի պայմաններում Ընկերության ապագա զարգացումը կարող է երաշխավորված լինել, եթե օգտագործվեն նրա ներքին ռեսուրսները՝ առավելագույնս հենվելով Ընկերության մարդկային-մասնագիտական ներուժի վրա:

Ընկերությունը համապատասխան աշխատանքներ է իրականացնում Եվրոկոնտրոլ միջազգային կազմակերպության հետ Հայաստանի Հանրապետության տարածքով մայրուղային թռիչքների օդերևութաբանական սպասարկման դիմաց գանձումների իրականացման նպատակով:

Ընկերության հնարավորությունների ընդլայնման, օդերևութաբանական երևույթների և պրոցեսների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, պահպանման և օգտագործման բնագավառում շուկայական հարաբերությունների ձևավորման համար համապատասխան պայմանների ստեղծման, միջազգային ավիաօդերևութաբանական ցանցի կազմում ազգային ավիաօդերևութաբանական համակարգի համաձայնեցված և արդյունավետ գործունեության իրավական հիմքերի սահմանման, ինչպես նաև ավիաօդերևութաբանական գործունեության իրավական հիմքերը օրենքով սահմանելու նպատակով Ընկերության կողմից մշակվում է «Ավիաօդերևութաբանական գործունեության մասին» օրենքի նախագիծ, որը առաջիկայում սահմանված կարգով կներկայացվի շրջակա միջավայրի նախարարություն:

Միաժամանակ Ընկերությունը, որպես ազգային աերոնավիգացիայի օդերևութաբանական ծառայություն ապահովող մարմին, կօժանդակի ազգային տնտեսության աճին և հասարակության զարգացմանը:

Նախատեսվում է կատարելագործել ներդրված Որակի կառավարման համակարգի գործունեությունը, որի արդյունքում Ընկերությունում լիովին կկանոնակարգվեն փաստաթղթերի կառավարման, փոփոխությունների կառավարման և Ընկերությունում անվտանգության գնահատման կենսագործունեությանն առնչվող ընթացակարգերը:

Սույն թվականի հոկտեմբեր ամսին նախատեսվում է Որակի կառավարման համակարգի հերթական աուդիտ՝ սերտիֆիկացրած կազմակերպության կողմից:

Ընկերությունում իրականացված տեխնիկական վերազինման և ծրագրային ապահովումների հետ կապված բոլոր փոփոխությունները գնահատվելու են համաձայն գործող ընթացակարգերի:

Օդերևութաբանական ծառայությունների մատուցմանն առնչվող բոլոր ընթացակարգերը անմիջականորեն գտնվում են թռիչքային անվտանգության և որակի կառավարման բաժնի հսկողության տակ:

ԳԼՈՒԽ 9. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՕՊՏԻՄԱԼԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Օդերևութաբանական սպասարկում իրականացնող աշխատակիցների մասնագիտական գիտելիքների կատարելագործումն իրականացվում է համապատասխան վերապատրաստման դասընթացներին պարտադիր մասնակցության միջոցով հինգ տարին մեկ անգամ, ինչը բխում են ԻԿԱՕ-ի և ՀՕԿ-ի պահանջներից:

Նոր տեխնիկական միջոցների ներդրման հետ կապված իրականացվում են սպասարկող անձնակազմի տեխնիկական ուսուցումներ աշխատանքային տեղերում, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև արտադրողի կողմից կազմակերպված վայրում:

Ընկերությունը վարում է բարձր մակարդակի մասնագետների ընտրության քաղաքականություն:

Մինչև սույն թվականի դեկտեմբերի 25-ը նախատեսվում է ավարտել կանխատեսողների մասնագիտական պատրաստվածության (կոմպետենտ) համապատասխանության վերաբերյալ ստուգումները:

Ընկերությունն իրականացնում է ծախսերի օպտիմալացման քաղաքականություն և ծրագրում է հնարավորինս կրճատել դրանք. մասնավորապես՝ 2021 թվականին Ընկերության հաշվեկշռում հաշվառված ավտոմեքենաներից երեքը օտարվել են, իսկ դրանց համար նախատեսված ծախսերն ուղղվել են տեխնիկական միջոցների վերազինմանը:

Նախատեսվում է քննարկել նաև մատուցվող ծառայությունների գնագոյացման համակարգն ու ծառայությունների հնարավոր նոր գնորդների հետ աշխատելու ներուժը: Ընկերության ֆինանսական իրացվելիությունը բարձրացնելու նպատակով «Շիրակ» օդանավակայանից թռիչք-վայրէջք իրականացնող օդանավերի համար սույն թվականի հուլիսի 1-ից սահմանվել է միջազգային թռիչքների համար 10000 ՀՀ դրամ, իսկ տեղական թռիչքների համար 5000 ՀՀ դրամ օդերևութաբանական սպասարկման սակագին (2017 թվականի փետրվարի 1-ից բոլոր օդանավ շահագործող կազմակերպությունների համար սահմանվել է անվճար ավիաօդերևութաբանական սպասարկում), բացի այդ, «Զվարթնոց» օդանավակայանից օդանավերի տեղական թռիչքների օդերևութաբանական սպասարկման մեկ թռիչք-վայրէջքի սակագինը 30000 ՀՀ դրամից իջեցվել է 10000 ՀՀ դրամ: